

# ՄԱՍԵՆԱԽՈՍՈՍԻԹԻԿԱ

ԱՐԻՍՏՈՆԻԿԱ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵՑԱՆ

Քահանայական խնդիր, Մոսկովա, 1900 թ., գինը 1 ռ.

Հեղինակը երկար տարիների ընթացքում զանազան պաշտօններ է վարել համարեա մեր բոլոր թեմերում, ուստի նրա պատմածը ճիշտ գիտողութիւններ են և պաշտօնական վաւերագրերով հաստատուած վաստեր։ Նրա անվիճենք մերկացումները արդիւնք են անմիջական ծանօթութեան մեր տիտոր իրականութեան հետ։ Վաղուց Արիստոնիկէս և պիտի պատուիր, իբրև առաջնորդ, ձգտել է մտցնել իրան յանձնուած թեմերում այն վերանորոգութիւնները, որոնց ջատագովն է եղել միշտ։ բայց եջմիածնի կննարոնական իշխանութիւնը խոչնոտներ է յարուցել նրա գործունէութեան գէմ և աշխատել է այնչափ անախորժութիւններ պատճառել այդ գործիչն, որ նա ստիպուած հեռանայ ասպարէզից ծաւալի վաստ է, որ եջմիածնի կենարոնական իշխանութիւնը երբէք չէ ղեկավարուել գործունէութեան մի հաստատ ծրագրով, մի որոշ սկզբունքով, այլ նրա մշտափոփոխ կարգադրութիւնները զորկ են եղել խելացի հիմունքներից և օրինականութիւնից։ տղէտ ամիական քմահաճութիւնը եջմիածնի իշխանութիւննեան բնորոշ գիծն է եղել։ Նա երբէք չէ յարգել մեր եկեղեցու ժողովրդական սկզբունքը, այլ թէ ծրախական ժողովների, թէ երեցիոխների և թէ հոգաբարձունների հետ արել է, ինչ ուղեցել է։ Մի գրչի շարժումով, մի անմիտ ու թեթև «Իրահանգույ» յանկարծ այնպիսի փոփոխութիւններ են մտցրել ժողովրդի դարեւոր իրաւունքների մէջ, այնպէս բռնազրութեամբ կբաժանել են կամ վերացուել նրա իրաւունքները, որ կաբծես մեր վեղարաւորները վայրենիների բռնապետներ լինելու, որոնք գաղափար չունեն կարգ ու կանոնի մասին։ Կաշառակերութիւնը միայած փաշայական կամայականութեան հետ՝ ձգտել են քարուքանդ անել մեր մէջ ամեն բան, պղծել ժողովրդի ամնն որբութիւն։

Այդ պայմաններում անկասկած Արիստակէս եղ. Սեղբականը մի բացառիկ տեղ է բռնում մեր հոգևորականութեան մէջ. նա, իբրև քաջ և հաւատարիմ հովիւ, անվեհերութեամբ պաշտպանում է իր հօտն ու եկեղեցին փարաջաւոր գայլերից և դիմակաւորուած խաչագոյներից. նա իր անաշառ մերկացումներով ձգտում է մաքրել այն ապականուած կղերական մթնոլորտը, որից խեղդւում է մեր ժողովրդական եկեղեցին:

Սակայն անկասկած է, որ այդ մթնոլորտը կը պարզաւի, երբ նախ ինքը՝ կենդրոնական իշխանութիւնը կը բարեփոխուի, և երկրորդ՝ երբ հայ հասարակութիւնը խստպահանջ կը լինի և իր իրաւունքները գիտակցօրէն կը պաշտպանի կղերի ոտնձգութեան դէմ...

Քահանայական խնդրով հետաքրքրուողը կը գտնի այդ գրքի մէջ առատ նիւթեր մեր իրականութեան մի ցաւի մասին և կը տեսնի հարցի հիմնաւոր և բարեխիղճ լուսաբանութիւն: Եզրակացութիւնները, որոնց համար է հեղինակը, կարելի է ամփոփել հետևեալ ձևով.

1) Եկեղեցին պահանջի կատարումն ոչ մի դժուարութիւն չէ ներկայացնում քաղաքներում և մեծ գիւղերում.

2) Այդ պահանջի կատարումն ոչ մի դժուարութիւն չէ նաև կարգելու համար կարելի է մի քահանայ կարգել.

3) Արժանի փոքր գիւղերի համար կարելի է մի քահանայ կարգել:

4) Արժանականաւոր անձինք յօժարութիւն ցոյց կը տան գնալ գիւղ քահանայութեան համար, եթէ այսուհետեւ բացուելիք տեղերը կը ստանան միայն կրթութիւն և բարոյական վարկ ունեցողները, և եթէ դրանց կը տրուի նիւթական ապահովութիւն.

5) Ժամանակակից ապահովացման ամենայարմար ձեռը, որ

աղատում է քահանային մուրացկի և փողաւոր ծիսականների հացկատակ լինելու դրութիւնից՝ հաստատ ոռճիկն է:

6) Ռոճիկի հարցը դժուար չէ իրագործել: Ծխականը, փոխարէն գանձանակի մէջ փող ցցելու և օրինակատարութեան համար աէրաէրի բուռը դրամ դնելու, վճարում է որոշ տուրք եկեղեցուն: Երեցիսի մօտ գումարուած դրամից, ծխական ժողովի որոշմամբ, յատկացնւում է ոռճիկ եկեղեցու բոլոր պաշտօնեաններին:

Ցանկալի է, որ այս աշխատութիւնը կարդալով՝ մեր հոգեր իշխանութիւնն աշխատի ուղղուել և վերջ դնել տիրող չարիքին:

Ժողովրդի համար կարեռը այդ է, և պէտք է մեր հոգե-

ւորականները մտածեն այդ ուղղութեամբ և ոչ թէ աշխատեն՝  
սուտ ու մուտ փաստարանութիւններով անպատճառ սպիտա-  
կացնել ակներեւ սեւ կողմերը:

L. U.

**Զ. ԳՈՒԽՑՈՆ ԼՈՒՍԻԵՆԸՆՆ. Նոր բառզիրք պատկերազարդ ԺՐԱՅ-  
ԱԿԻԱՅ: Հասոր առաջին. A-H., Պարիզ, 1900. Եր. Ճ-1061.**

Այս նոր բառարանը թուով վեցերորդն է ֆրանսերէն-հայ-  
երէն բառարանների մէջ \*), և բոլորի էլ հեղինակները տաճկա-  
հայեր են: Այս երեսյթը շատ հետաքրքրական է մեր մտաւոր  
կրթութեան պատմութեան համար: Այսքան թուով ֆրանսերէն-  
հայերէն բառարանների գոյութիւնը անհերքելի ապացոյց է այն  
բանին, որ մեր տաճկահայ եղբայրները իրանց մտաւոր սնունդն  
ստանում են ֆրանսիական գրականութիւնից, ինչպէս մենք՝  
ուստաց ու սուսերէնից: ուրեմն և նրանց լեզուի ու գրական ուղղութեան  
մէջ բնականօրէն պէտք է տիրապետէ ֆրանսիական ոգին: Միւս  
կողմից երեսում է, որ մեր տաճկահայ եղբայրները թէ մայրէնի  
լեզուի և թէ առհասարակ լեզուների ուսումնասիրութեան մէջ  
շատ աւելի առաջ են գնացել քան մենք: Մենք որ մեր մտաւոր  
սնունդն ու լեզուային ճաշակն առնում ենք գրեթէ միայն ուռ-  
սերէնից՝ հարիւր տարուայ ընթացքում արտադրել ենք հազիւ-  
թէ և ուռս-հայերէն բառարան, որոնցից ոչ մէկը չէ կարող բա-  
ռարարութիւն տալ նոյնիսկ համեստ պահանջներին, և այսօր  
ամեն մի կրթուած հայի ցանկութիւնն է ունենալ մի կատա-  
րեալ բառարան ուստերէնից հայերէն: Բացի ուռս-հայ թարգմա-  
նական բառարաններից՝ ուռսահայերս չենք տուել և ոչ մի ու-  
րիշ բառարան, ոչ թարգմանական և ոչ մայրէնի լեզուի: Այս-  
ինչ մեր տաճկահայ եղբայրները աշխատասիրել են մի երկար  
շրջ բառարանների, թէ լոկ մայրէնի լեզուի (4 հատ) և թէ  
թարգմանական, գերմաններէնից, անգլիերէնից, յունարէնից, ի-  
տալերէնից, պարսկերէնից և ֆրանսերէնից հայերէն: և սրանք  
բոլորը, ունենալով աւելի կամ նուազ պակասութիւններ՝ այնու-  
ամենայնիւ բոլորն էլ բարձր են քան ուռս-հայերէն բոլոր բա-  
ռարանները: Աւելացնենք սրա վրայ և այն իրողութիւնը, որ թէ  
հայերէնի և թէ օտար լեզուների հայերէն քերականութիւններ,

\*) Առաջին հինգն են՝ Աւգերևանի (Վենետիկ), Էմինեանի (Վիեննա),  
Նորպարեանի (Զմիւնիա), Տաղասարեանի և Նորալի (Կ. Պոլիս) բառա-  
րանները: